**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**№ ՇՀԱՊՁԲ-7/38-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 10.08. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և <«ԳԴԱԿ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Երանոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 13.07.2017թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/38-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով, որ մատակարարվող՝ Վրաններ /Վրան՝ ՈԻՍԲ-56/ և Վրաններ /Վրան՝ ՈԻUS-56/ ապրանքատեսակները հանդիսանում են հիմնական միջոց, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 5.2՝ հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը և 5.2.1՝ եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները, դրույթները:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 00867418<br>ՀՀ պաշտպանության նախարարության<br>ՆՏԱ դեպարտամենտի պետ, ՊԺԿ<br><br>Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | «ԳԴԱԿ» ՍՊԸ<br>ք. Երևան, Սարի թաղ 12., տ. 8<br>«Արդշինբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2470100487150000<br>ՀՎՀՀ 00432114<br><br>տնօրեն<br><br>Ս. ԵՐԱՆՈՍՅԱՆ |

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

**ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/38» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017թ. հուլիս 13-ին կնքված ՇՀԱՊՁԲ-7/38-1 գնման պայմանագրում 2017թ. օգոստոսի 10-ին կատարված փոփոխության:

**Փոփոխության պատճառ** : Հիմք է ընդունվել տվյալ ապրանքների հիմնական միջոց հանդիսանալու հանգամանքը:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը, հիմք ընդունելով, որ մատակարարվող՝ Վրաններ /Վրան՝ ՈՒՍԲ-56/ և Վրաններ /Վրան՝ ՈՒUS-56/ ապրանքատեսակները հանդիսանում են հիմնական միջոց, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 5.2՝ հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը և 5.2.1՝ եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները, դրույթները:

***Փոփոխության հիմնավորում***: 13.07.2017թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/38-1 գնման Պայմանագրի 9.4 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Բաղդասարյանին:

Հեռախոս՝ <u>294418:</u>

Էլ. փոստ՝ ***<u>t.baghdasaryan@mil.am</u>*** :

Պատվիրատու՝ <u>ՀՀ պաշտպանության նախարարություն:</u>